ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
05 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 218-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՄԱՐՑ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԽՈԶԱԼԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԱՄԱՍ ԹԻՎ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-071-0110-0102 ԾԱԾԿԱԳՐԻ 0,068 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ,ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ԱՅԼ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ 648,4 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԿԻՍԱՔԱՆԴ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏԻԳՐԱՆ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24) կետով, 43-րդ հոդվածի 1-ին մասի 3) կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ և 70–րդ հոդվածներով, 2003 թվականի հոկտեմբերի 8-ի «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 13-րդ կետի գ) ենթակետը, 22-րդ և 23-րդ կետի դրույթները, Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 7-ի թիվ 49-Ա որոշումը և հաշվի առնելով աճուրդի կազմակերպչի 2022 թվականի օգոստոսի 3-ի «Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող գույքը և հողամասը կրկնակի աճուրդով վաճառելու մասին» թիվ 1 արձանագրությունը, ըստ որի 2022 թվականի օգոստոսի 3-ին Թումանյանի համայնքապետարանում կայացած աճուրդում համայնքի սեփականություն հանդիսացող Մարց գյուղում գտնվող 06-071-0110-0102 կադաստրային ծածկագրի 0,068 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլարտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և հողամասում առկա 646,4 քմ մակերեսով կիսաքանդ շինության սակարկության արդյունքում հաղթող է ճանաչվել Տիգրան Դավթյանը՝

Որոշում եմ.

1. ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի սեփականություն հանդիսացող Մարց բնակավայրի Խոզալանների հանդամաս թիվ 1 հասցեում գտնվող 06-071-0110- 0102 կադաստրային ծածկագրի 0,068 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը և հողամասում առկա 646,4 քմ մակերեսով կիսաքանդ շինությունը, որը չի համարվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամաս, օտարել Տիգրան Սեյրանի Դավթյանին՝այսուհետ Գնորդ:
2. Սահմանել, որ Գնորդը պարտավոր է աճուրդը կայանալուց հետո 10-օրյա ժամկետում հողատարածքի սակարկության արդյունքում ձևավորված գինը՝ 2 625 000 (երկու միլիոն

վեց հարյուր քսանհինգ հազար) ՀՀ դրամ վճարել Թումանյան համայնքի բյուջեի N 900265123167 հաշվին:

3. Լիազորել Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ռ. Թորոսյանին՝ հողատարածքի համար ձևավորված գինը վճարելուց հետո, 2-օրյա ժամկետում Թումանյան համայնքի ղեկավարի անունից Գնորդի հետ կնքել հողատարածքի օտարման պայմանագիր:
4. Նախազգուշացնել Գնորդին, որ հողատարածքի օտարման պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքները՝ 30-օրյա ժամկետում պետական գրանցման:

5.Սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնել օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. օգոստոսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 219-Ա

ՌՈՒԴԻԿ ՍԱՐԳՍԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Ռուդիկ Սարգսի Հովակիմյանի /մուտք՝ 04.08.2022թ. թիվ 545/ դիմումը, Հողային բարեփոխ. և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 22.04.1991թ. թիվ 6 որոշումը, <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ–ի կողմից կազմված հողամասի հատակագիծը,տրված 05.12.2011թ, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով և ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով՝

Որոշում եմ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-035-0073-0026 ծածկագրի 0.12182 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի նկատմամբ Ռուդիկ Սարգսի Հովակիմյանի /ծնվ. 15.07.1947թ./ սեփականության իրավունքը:

2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, ընդգրկված չէ ՀՀ ՀՕ 60 -րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում,չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները:

3. Հողամասի սահմանները որոշվում է համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

4. Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի աշխատակազմի Լոռու մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. օգոստոսի 05
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 220-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով Գայանե Վանիկի Սարգսյանի դիմումը,<Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ 873798 տրված 19.12.2002 թ. և համայնքային ծառայության երկրորդ կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Գայանե Վանիկի Սարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Լոռու մարզ գ. Լորուտ (ծած.06-045-020-000022-001) բնակելի տանը,մակերեսի չափը՝46,6քմ և բնակելի կառուցապատման հողամասին,մակերեի չափը՝ 0,359 հա տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Լորուտ, 2-րդ փողոց, 3 բնակելի տուն>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. օգոստոսի 08
ք.Թումանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 ՕԳՈՍՏՈՍԻ 2022թվականի N 221-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ», «ԼՈՐՈՒՏԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ»,«ԹՈՒՄԱՆՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ԵՎ «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՐԻՆՋ ԳՅՈՒՂԻ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի մարտի 26-ի N 02-Ն հրամանով հաստատված կարգի 7-րդ կետի և հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 15-ի N 31-Ա որոշումը, Լոռու մարզպետի 2022 թվականի օգոստսի 02-ի N 01 /106.3.1/06517-2022 և «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ՝ 2022 թվականի օգոստոս 4-ի գրությունները՝

որոշում եմ.

1.ՀՀ Լոռու մարզի Թումանյան «Դսեղ համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություն»,«Լորուտի նախադպրոցական ուսումնական հաստատություն»,«Թումանյան քաղաքի նախադպրոցական ուսումնական հաստատություն» և «Լոռու մարզի Թումանյան համայնքի Քարինջ գյուղի նախադպրոցական ուսումնական հաստատություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար 2022 թվականի հուլիսի 21-ին կայանալիք մրցույթն անցկացնելու նպատակով ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Սուրեն Վաչագանի Թումանյան ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի ավագանու անդամ,համայնքի ղեկավար
հանձնաժողովի քարտուղար՝Ռուզաննա Գուրգենի Շահվերդյան - Թումանյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ
հանձնաժողովի անդամներ՝Անահիտ Բարոյան ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության մասնագետ,
Մարիամ Պողոսյան ՀՀ Լոռու մարզպետարանի կրթության մշակույթի և սպորտի վարչության մասնագետ,
Համլետ Քոչարյան «Թումանյանի քաղաքային համայնքի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 08
ք.Թումանյան